№ 51 Ապրիլի 13 (25) 1879 Ապրիլի 13 (25) № 51

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրէաների դէմ մեղադրանքը:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Կ. Պոլսի ազգային ժողովի նիստը: Թիւրքիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ՀՐԷԱՆԵՐԻ ԴԷՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Ռուսաստանի նահանգի մէջ պատահած անցքը կրկին զարթեցրեց ոչ թէ միայն մեր անդրկովկասեան, բայց և ամբողջ Ռուսաստանի հասարակութեան մէջ հրէաների դէմ մի սարսափելի, արիւնօտ մեղադրանքի յիշողութիւնը:

Ինչպէս յայտնի է, ոչ թէ միայն Կովկասի և Անդրկովկասի ժողովրդի, բայց և ամբողջ Ռուսաստանի ստորին ժողովրդի մէջ կայ մի աւանդութիւն, մենք աւելի կասենք, մի համոզմունք, որ իբր թէ հրէաները իրանց զատիկը տօնում են, մորթելով քրիստոնեայ մի երեխային և խմելով անմեղ զոհի արիւնը:

Նորերումս Ռուսաստանի նահանգի մի գիւղի մէջ մի փոքրիկ աղջիկ կորաւ: Նրան գտան մեռած անտառի մէջ կորչելուց մի քանի օր յետոյ: Հրէաները մեղադրվեցան այդ յանցանքի մէջ և նրանցից շատերը ներկայացան Ռուսաստանի նահանգական դատարանի առջև: Ռուսաստանի ամենաերևելի ադվոկատներ եկան Ռուսիս մեղադրվածներին պաշտպանելու համար: Նահանգական դատարանը ոչինչ ապացոյցներ չունենալով, արդարացրեց մեղադրվածներին: Աղջիկը ապանվեցաւ, կամ խեղդվեցաւ, բայց ոչինչ ապացոյցներ չը կային թէ այդ յանցանքը գործել էին հրէաները:

Ի՞նչի վրա է հիմնում ժողովուրդը իր մեղադրանքը հրէաների դէմ, ի՞նչ է այն ժողովրդական համոզմունքի աղբիւրը, իբր թէ հրէաները հաղորդվելու համար, պէտք է քրիստոնեայ երեխայի արիւնը խմեն:

Մոսկոսականութիւնը իր ոչ մի ծէսի մէջ չէ ընդունում կենդանի մարդու արիւնը խմելու անհրաժեշտութիւնը: Հրէաները, ինչպէս յայտնի է, սաստիկ մոլեռանդ են և հաւատարիմ են իրանց կրօնին: Նրանք լուսաւորվելով էլ միշտ հաւատարիմ են մնում իրանց հաւատին և անսասելի ճշդութեամբ կատարում են իրանց կրօնի բոլոր ծէսերը: Ի՞նչի, ուրեմն, նոյն մեղադրանքը հրէաների դէմ երբէք չէ լսվում Եւրոպայում: Մինթէ եւրոպացի հրէաները փոխել են իրանց ծէսերը, իրանց եկեղեցական արարողութիւնները,—դա անհնարին է կարծել:

Ոբքան մեզ յայտնի է, առաջին անգամ հրէաների դէմ սարսափելի մեղադրանքը ծնունդ է արել Լեհաստանում, ֆանատիկոս կաթոլիկ կղերի, հրէութեան այդ անհաշտ թշնամու շրջանում:

Նպատակը, որի համար նպատակը արդարացնում է միջոցները, կարող էր դիտմամբ գաղտնի կերպով սպանել տալ երեխաներին, դցել դիակները հրէաների ընակեցրած տները, որպէս զի աւելի զրդռի բարեպաշտ կաթոլիկ ժողովուրդը Մոսկոսի կրօնի դէմ:

Նիկողայոս կայսրի ժամանակ պատահեցին մի քանի պրոցէսներ հրէաների դէմ, բայց պրոցէսներից և դատաստանական հետախուզութիւններից ոչ մինը չը պարզեց հարցը և չը կարողացաւ հրէաների վրա բարձած մեղադրանքը հիմնաւորապէս հաստատել և ապացուցանել: Պրոցէսների մինից, այն է Սարատովի երևելի պրոցէսից, երևաց որ նոյն իսկ հրէաներից մինը, որ քրիստոնէութիւնն էր ընդունել, իր նախկին համադաւանիներից, որոնք ապհամարհանքով էին վարվում իր հետ, վրէժխնդիր լինելու համար, սպանեց մի փոքրիկ երեխայ, ծակելով նրա սիրտը, և դցեց հարուստ հրէաներից մինի տան ներքնայարկը....

Մի բանն էլ հարկաւոր է մոռանալ. ինչպէս այժմ քրիստոնեայ ժողովրդի ոգէտ, ռամիկ մասը մեղադրում է հրէաներին, թէ նրանք մարդկային արիւն են խըմում հաղորդվելու ժամանակ, նոյն մեղադրանքը բարձում էին հեթանոսները քրիստոնեաների վրա, քրիստոնէութեան առաջին դարերում: Հեթանոսները հաւատացնում էին, թէ քրիստոնեաները հաղորդվելու ժամանակ մորթում են մի հեթանոս երեխայ և խմում են նրա արիւնը:

Դորա համար էլ քրիստոնեաները գլխաւորապէս հալածված էին հեթանոսներից և ստիպված էին լինում ճաշակվել ծածուկ տեղերում, խոր այրերի մէջ, գաղտնի կերպով, հեթանոսներից հեռու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

26 մարտի

«Մշակի» № 33-ում Ալէքսանդրապոլից տպած նամակը դեռ մինչև ցայսօր քաղաքի ամեն քունջ ու պուճախում խօսակցութեան առարկայ է դարձել: Իսկ՝ ինչ վերաբերում է ուսուցչական խմբի հոգեկան աշխատութեան, զարհուրելի է: Պլեշնայի առումը այնքան չը վիրաւորեց Օսման-փաշային, որքան յիշեալ անստորագիր նամակը խոր խոցել, խոցոտել և վրդովել է մեր ուսուցիչների քնքոյշ սիրտը: Ամենայն օր իրար եախից բռնած, կծու՝ կծու խօսքերով անպատւում են միմեանց, կարծելով որ այդ գաղտնի նամակագիրը անպատճառ իրանց խմբիցն է, որ կարողացել է այդ խորունկ թագցրած ճշմարտութիւնը գիտենալ:

«Եղբայր, եթէ մեր խմբիցը չէ, այդ անամօթ լիրբը, տաքացած ասում է մէկը, օտարը ի՞նչ գիտէր թէ մենք գիշերները գնում ենք թուղթ խաղալու, կամ հայոց լեզուի վարժապետը Թիֆլիսում չալիշ է գալիս.....և այլն:

«Ի հարկէ, մեր խմբիցն է, գոռում է երկրորդը, օտարը երբէք այդքան մանրամասնաբար չէր կարող գրել....»:

«Էհ, ատամները կրճտացնելով, ասում է երրորդը, թէ ճիշդը իմանամ, կոռտով պիտի թքեմ երեսին ու մի լաւ լոթու ապտակ էլ գլխին պիտի իջեցնեմ, որ աչքերը սև ջուր իջնի, մէկ էլ եղնի այդպէս մեղը չուտէ»: «Չէ՛, եղբայր, չէ՛ բորբոքված բղաւում է չորրորդը, այդ տեսակ լրբերին թուքն ու ապտակը օգուտ չունի, վկայ չը կայ բան չը կայ, ո՞վ է տեսել մեր թուղթ խաղալը. գնանք ուղղակի դատ բաց անենք, պաշտօնական ձևով խմբագրատանից այդ նամակագիրը իմանանք, մի լաւ պատժել տանք, պրծաւ գնաց.... և այլ այսպիսի վիճաբանութիւններով մթնացնում են:

Պ. պ. ուսուցիչներ, չը կարծէք թէ ես էլ ձեր խմբիցն եմ, որ այս բաները գիտեմ, ո՛չ, սիրելի՛ք, ես ձեզանից թէև շատ հեռու եմ, բայց իմ սիրունիկ ճնճղուկը ամեն բան ինձ հասցնում ու պատմում է որ դուք, իմ ժրաջան ուսուցիչներ, այդ անստորագիր նամակի պատճառով շատերին զրպարտեցիք, մանկավարժական ժողովի հարց շինեցիք, մի քանիսին վիրաւորեցիք, շատ տաք տաք վիճեցիք, Թիֆլիս նամակներ գրեցիք ու որպէս թէ «Մշակի» խմբագրատան հետ մօտ յարաբերութիւն ունեցողներից նամակագրի անունը իմացաք. վերջը կուժը ձեր պաշտօնակից պ. Մուշեղ Մամիկոնեանցի գլխին կոտրեցիք, մանկավարժական ժողովում խեղճի հետ կուեցիք «լէրբ, անամօթ» բառերով իրար անպատուեցիք և վերջը թանաքամանը նամակագիր Մուշեղի գլխին խփեցիք: Կ՚ցցեն (բացառութիւններ կան) ուսուցիչները իրանց կենդանի դաստիարակութեամբ..... Իսկ դո՛ւ, խե՛ղճ Մուշեղ, ի՞նչպէս համարձակվեցար այդ «վերին աստիճանի անբարոյականութիւնը» գործել: Ողորմելի մարդ, տարաբաղդ երիտասարդ, ուրիշները ազատվեցին այդ զրպարտութիւնից, այժմ դո՛ւ ընկար կրակը. դէ՛ քաշէ ջանդ դուրս գայ: Դու «պատրաստականի փոքր վարժապետ» լինի՞ս, ու Վստահանաս «Լաւագ ուսուցիչների» աչքի գերանը նկատել, այդ մի անտանելի և աներելի յանցանք է:

Տօ՛, ապերախտ, ասենք թէ քոյ ընկերները շատ էլ թուղթ են խաղացել, գիշերները անքուն մնացել, ցերեկը դասերը թողել, մանկավարժական ժողովում էլ թուղթ խաղալու համար հարց բարձրացրել, իրար անարգել.... և այլն և այլն. ի՞նչ անենք, ախր նրանք էլ միս ու արիւն են. դիակներ խամ չեն որ բոլորովին անշարժ մնան: Չէ՛, չէ՛ եղբայր, ամեն բան (մանաւանդ ուսուցիչների վրա) լրագրերում չեն գրի և աշխարհի երեսին չեն տարածի: Լա՛, ո՞վ քեզ «բարաքեաՀլա» կասի, եթէ միւս անգամ էլ վերկենաս ու լրագրի մէջ գրես թէ Ալէքսանդրապոլի աւագ ուսուցիչները շատ կոպիտ են վարվում փոքր ուսուցիչների հետ. ամեն դէպքում նրանց վիրաւորում, աշակերտների առաջ զանազան խորամանկ ակնարկութիւններով նրանց վարկը կոտրում, ամեն բան իրանց ասածով անում: Կամ թէ քո արածը «վերին աստիճանի անբարոյականութիւն» չի՞ լինիլ, որ վերկենաս ու հրապարակաւ պատմես թէ «եթէ աւագ ուսուցիչները ամսվայ մէջ մի քանի դաս բաց թողնեն, ինաս չունի, դա մի անմեղ յանցանք է: Իսկ եթէ փոքր ուսուցիչներից մէկը մի անգամ ուշանայ, իսկոյն քննութեան կենթարկվի: Աւագ ուսուցիչները առանց հոգաբարձութեան և առանց ժողովի մէջ խօսալու լիովին իրաւունք ունեն որ և իցէ ժամանակում աղաների աղջիկները դպրոցում սեղաւորելու, իսկ Ղարսից մի աղքատ գերդաստանի աղջիկը ընդունելու համար հաղար անգամ խօսվեցաւ ու խնդրվեցաւ, դարձեալ հնար չեղաւ, խեղճ աղջիկը Ղարս վերադարձաւ, որովհետև խնդրողը «փոքր ուսուցիչներից էր....»: Հաղար այսպիսի օրինակներ կան. ես ո՞ր մէկը գրեմ:

Էհ, Մուշեղ, դու քո ընկերներով մի լաւ մտածիր. դուք ո՞վ, նրանք ով: Նրանք կազմուածքով ձեզանից խոշոր, կամ արտասահմանում աւարտել, կամ ինքնակրթութեամբ զարգացել և կամ տեղական դպրոցում, ռուսերէնը ծայրէ ի ծայր աւարտել: Իսկ դուք, (ինչպէս կարծում են) «մանտր մունտրներ, երեխաներ, խաժամուժ ամբոխներ» ինչ՞ցու էք:

Եզրափակելով նամակս, նախ՝ խնդրում եմ ձեզանից պ. պ. «մանտր մունտր» ուսուցիչներ, եթէ չէք ցանկանում, որ Մուշեղի գլխին խըփած թանաքամանը մի օր էլ ձեր գլուխը համբուրէ, եղէք բոլորովին համ, մունջ և կոյր: Ամեն կերպով ձեր կեանքը նուիրեցէք «աւագ ուսուցիչներին, եղէք բոլորովին հլու, հնազանդ և անխօս դիակներ նրանց մօտ: Միշտ գովեցէք, փառաբանեցէք նրանց. քանի կարող էք

կեղծաւորվեցէք և ոլիմպիական գագաթից արձակած հրամանները առանց ընդդիմանալու կատարեցէք. առանց նրանց հրամանի չուտէք, չը խմէք, չը քնէք..... ապա թէ ոչ, դուք կը զրկվէք ձեր պատուից և մինչև անգամ պաշտօնից։ Լսեցէք։

Դ։ երկրորդ՝ դառնալով դէպի ձեզ, պ. պ. «աւագ ուսուցիչներ», ամենախոնարհաբար խնդրում եմ, որ այս նամակիս պատճառով էլ ի զուր իրար ե ա խ ա չը բռնէք և իրար չը վիրաւորէք, որովհետև այս նամակագիրը ձեր խմբից չէ և այս ճշմարտութիւնը ձեզ հաւատացնելու համար երդվում եմ նրանով, ինչ որ ձեզ համար աշխարհի կամ տիեզերքի մէջ սուրբ ու պաշտելի է։ Միայն շատ, քիչ յարաբերութիւն ունեմ ձեր ուսումնարանի և մի քանի աւագ ուսուցիչների հետ։

Ես զարմանում եմ մեր ուսուցիչների վրա թէ ինչո՞ւ են նրանք կարծում, թէ չը կայ ժողովրդի մէջ մի աչք, որ տեսնէր իրանց պակասութիւնները և մի գրիչ որ գրէր դրանց։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ալէքսանդրապոլ, 24 մարտի

Ձեր լրագրի 33 համարում Ալէքսանդրապոլից գրված մի անստորագիր թղթակից իր գրութեան նիւթ էր դարձրել վարչութեանս հսկողութեան տակ գտնված Սահականուշեան ձրիավարժ օրիորդաց դպրոցը։ Թողնելով նամակի այն մասը, որ մի քանի ուսուցիչների անձնական գործերին է վերաբերում, վարչութիւնս հարկ է համարում մի համառօտ գրութեամբ պատասխանել այն կէտին, որ դպրոցին և վարչութեան գործունէութիւնն է շօշափում։ Պ. յօդուածագիրը մի արհամարհական բացականչութեամբ է սկսում Սահականուշեան դպրոցին վերաբերեալ տողերը. «ի՞նչ տեսակ ուսումնարան է այդ դպրոցը, որի համար ինչպէս երևում է ուսուցչական խումբը շատ է աշխատում հարստացնելով նորա գանձարանը»։

Նամակագիրը հետաքրքրվել է և իրը թէ այցելել է դպրոցը, բայց աւաղ նա չէ գտել մի փառաւոր, հոյակապ պալատ, զարդարված փարիզեան կահկարասիքով, այլ ընդհակառակը նա տեսել է մի անշուք սենեակ, պարզ նստարաններ, աններկ գրատախտակներ, խոնաւ պատեր և այլն։

Ինչ վերաբերում է դպրոցի շինութեանը, ճշմարիտ որ հոյակապ շինութիւն չէ, մինչև անգամ խոնաւ է. պէտք է ասել, որ Ալէքսանդրապոլում շատ սակաւ տներ ազատ են այդ պակասութիւնից, խոնաւութիւնը մի ընդհանուր բնական պակասութիւն է այս տեղ։ Վարչութիւնս ամբողջ 4 ամիս աշխատում էր մի առաւել յարմարաւոր շէնք գտնել դպրոցիս համար, բայց ապարդիւն եղան նորա աշխատանքները։ Այն տունը, որի մէջ ուսումնարանն է վարչութիւնս չորս անգամ աւելի վարձ է վճարում, քան պատերազմից առաջ և այսպիսի սուղ միջոցներով վարչութիւնից իր ուժից աւելի բարձր պահանջներ սպասել—դա անմտութիւն է և անհեռատեսութիւն։ Պ. նամակագիրը երկու ծայրայեղութիւն է սիրել՝ կամ ոչինչ չունենալ կամ ունենալ ամենափառաւոր օրինակելի դպրոցական շինութիւն. դա շատ փափագելի է իւրաքանչիւր անհատիս համար, «տուեցէք մեզ յենման կէտ և մենք երկրագունտը իր տեղից կը շարժենք»։

Ինչ վերաբերում է նորան, թէ ուսումնարանը անմաքուր է, պատուհանները կոտրված են, տաս ֆունտանոց փալասներ են կախված գրատախտակների մօտ, վառարանները քանդված են և թէ դասատունը աղքատի սենեակի կը նմանի և այլն, և այլն—դոքա բոլորը անխիղճ զրպարտութիւններ են.

Նամակագիրը իր մի այցելութեամբ, մի քանի բօպէ ներկայութեամբ ևս ուսումնարանի ուսումնական մասն է կրիտիկայի տակ ձգել և նորա աչքերին ոչինչ յառաջադիմութեան նըշոյլ անգամ չէ երևացել։ Պարոնը խօսել է հայոց լեզուի ուսուցչի հետ և պատճառներն իմացել, (թէև վարչութիւնս տեղեկացաւ հայոց լեզուի ուսուցչից և դասատան վարժուհուց, որ ոչ մի այցելուի հետ այդ տեսակ խօսակցութիւն տեղի չէ ունեցել, ապա ուրեմն և այդ նամակը երևակայական է ու շինծու)։ Դա պնդում է, թէ վարչութիւնը աղքատի վերմակի նման դասերը սորա և նորա վրա է ձգում։ Այդ բոլոր նկատողութիւնը անելուց յետոյ նա արդարացնում է ուսուցիչներին իրը թէ նոքա ձրի են աւանդում դասերը, ապա ուրեմն և իրաւունք ունեն անտարբեր վարվելու դէպի ուսումնարանը։

Այդ կէտի վերաբերեալ պէտք է պատասխանել, որ վարչութեանս իւրաքանչիւր անդամ ինքնուրոյն, իր սեփական համոզմամբ, իր ներքին ձայնի թելադրութեամբ և ամենայն սիրով աշխատում է այդ դպրոցի մէջ որքան ժամանակը ներում է առանց մի որ և է վարձատրութիւն և կամ ակնկալութիւն սպասելու, և ինչ հարկ կայ կեղծաւորվիլ, վարչութեան իւրաքանչիւր անդամ երբ իր սրտի ցանկութեամբ չէ պարապում, նա կարող է թողնել դասերը. բռնի ոչ ոքի չեն ստիպում գործ կատարել, նոյն իսկ վարչութիւնս խնդրում է թողնել դասերը նորան, ով որ հաճութեամբ չէ աւանդում դասերը։

Մենք չենք կամենում պարծենալ, այլ կամենում ենք ճշմարտութիւնը ցոյց տալ։ Թէ ինչ համակրութիւն է գտել այդ ուսումնարանը ժողովրդի մէջ, աչքի առաջ ունեցէք այս՝ որ մինչև ներկայ ժամանակս էլ անթիւ խնդրատուներ մեծ ուրախութեամբ դիմում են դէպի վարչութիւնս ընդունել իրանց օրիորդները Սահականուշեան դպրոցը, բայց տարաբաղդաբար տեղի անձկութեան պատճառաւ բացասվում է նոցա խնդիրքը։

Վարչութիւնս այնքան է կատարում, որքան կարողանում է, թող կատարէ առաւել լաւ ով կարող է. «Quod possum facio, faciant meliora potentes»։

Յարգոյ խմբագիր. վարչութիւնս խնդրում է տեղաւորել այս մի քանի տողերը ձեր պատուական թերթի մէջ ճշմարտութիւնը վերականգնելու համար։

Ստորագրութիւններ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ Խորէն վարդապետ Ստեփանէ «Հայկական Աշխարհ» ամսագրի հրատարակութիւնը յանձնել է պ. Վ. Բաբաջանեանցին։ Պարոնը յիշեալ ամսագիրը հրատարակելու է Երևանում։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հաղորդում են, որ Էջմիածնի վարդապետներից Վեհափառի ամենամտերիմը հայր Խորէն Ստեփանէն է համարվում։ Նորին Վեհափառութիւնը ընծայել է իր հաւատարմութիւնը յիշեալ վարդապետին այն օրից, երբ նա օգնել է Վեհափառ Կաթողիկոսին բարեկարգել Էջմիածնի ճեմարանը։ Վաղարշապատի մեր մի այլ թղթակից գրում է մեզ, ու հայր Ստեփանէն չէ սահմանափակում իր գործունէութիւնը միայն ճեմարանով։ Նա աշխատում է բարեկարգել գիւղի երկսեռ ծխական դպրոցները, որոնք մինչև այժմ անուշադիր էին թողված։

—

ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ պ. Նիկողայոս Նազարբէգեանից ստացանք յօգուտ «Արարատեան ընկերութեան» 10 րուբլի։ Պարոնը պարտաւորվում է իւրաքանչիւր տարի վճարել նոյն ընկերութեանը այդքան գումար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Անհաւասիկ Ազգային ժողովոյ վերջին նստին մէջ Մէրեմէտ Դուլի Յարութիւն էֆէնտիին կարդացած առենախօսութեան պատճէնը, զոր խնդրոյն կարևորութեան պատճառաւ արժան կը համարինք հրատարակել.

«Ես խօսք չը պիտի ուզէի այս խնդրոյն վրայ և բեմը չը պիտի եղնէի այսօր, ոչ թէ անոր համար որ խնդիրը վիճաբանութեան ենթարկել չարժէր, այլ քանզի մեր արդի վիճակը վիճաբանութիւն չը վերցներ։

Խօսելու ատեն չէ, Տեարք, այլ գործելու։

Եւ եթէ խօսք առի այժմ, նոյն իսկ վիճաբանութեան դռները գոցելու նպատակաւ ա՞ռի զայն, և ոչ ուրիշ պատճառաւ։

Յայտնի է ամենուն որ Պատրիարքական փոխանորդի ընտրութիւնն այս ժողովէն կատարուելուն համակարծիք չէի ես։ Այդ ընտրութիւնը վարչական խառն ժողովին թողուլս առաջարկութիւնն ընդդիմուն առաջինն էի։ Ուստի երբ ժողովս ընտրութիւնն ինքն ընելու որոշում առաւ, ուզեցի, ջանացի որ դէթ ընտրելոյն վրայ ընդհանուր համաձայնութիւն գոյանար. և երբ մանաւորաբար ժամանակի նիւթական անբաւականութեան պատճառաւ կարելի չեղաւ այն, ձեռնպահ մնացի և իմ ընկերներուս հետ ամեն զգուշութիւն բանեցուցի որ և է կերպիւ խնդիր չը յարուցանելու համար. վասն զի, կը կրկնեմ, խօսելու ատեն չէ ըստ իս այժմ, այլ գործելու։

Չեմ կասկածիր բնաւին և կը հաւատամ որ ընտրութեան մասին ժողովոյդ առած որոշումն ուրիշ բանէ առաջնորդեալ չէր, այլ ներկայ վիճակին զօրեղ դարմանն այն եղանակ կարենալ գտնելու համոզումէն։ Ինչպէս որ ժողովդ ալ պատճառ չունի չը հաւատալու թէ՝ մեր առաջարկութեան շարժառիթն ոչ այլ ինչ էր, այլ միայն մեր գործը՝ խընդրոյն յարակից պարագայներուն հետ հաշտեցնելու և արդիւնաւորութիւնն օրինաւորապէս յաջողեցնելու փափաքը։

Ուրեմն ամենուս տեսակէտն էր՝ մեր վարչական ընթացքին արդիւքը բառնալով, միասիրտ միախորհուրդ ազգային շահուց պաշտպանութեանն աշխատելու ադատ մնալ և կարող լինել, ինչպէս որ մեր կոչումն այսպէս կը պահանջէր բացարձակ, ինչպէս որ ազգն ալ մեզ զայս կանկալէր իրաւամբ։

Սակայն կը տեսնեմ որ Պատրիարքական փոխանորդի ընտրութեան օրէն՝ ի վեր դէպքերը կայծակի արագութեամբ իրարու կը յաջորդեն և այնպիսի կնճռոտ վիճակ մը կը պարզեն մեր առջև, յորում մեր խաղաղասիրական ձեռնպահութիւնը բաւական չը նկատուիր, յորում մեր լռին համակերպութիւնն անարդիւն կը մնայ և մեր բացարձակ համաձայնութիւնն ու գործակցութիւնը պայման կը դառնայ եկեղց հնարը գտնելու, և ներկայ վիճակին ապառնալից հետևանքը վանելու։

Անհաւասիկ, Տեարք, այս ծանր պարագային մէջ է որ հարկադրուեցայ խօսք առնուլ, և չեմ գիտեր թէ կարող պիտի լինիմ՝ անոր տարաւորութեան ներքև՝ պահել այն լրջութիւնն՝ որ անհրաժեշտ է լսելի լինելու համար։

Այս անվստահութեան՝ ի հակակշիռ՝ իմ պատուական պաշտօնակցաց խնամատութեանն ու խոհականութեանը կապաւինիմ, և այն զօրաւոր յուսով թէ քիչէն շատ պիտի հասկնան, կը մտնեմ՝ ի խնդիրն։

Մեզ ներկայեալ խնդիրը կը պարարէ զմեզ արդէն իւր բազմադիմի և բազմակնճիռն հանգամանքներով, և անոնցմէ զատ՝ յատկապէս կէտ մ՝ալ կը պարունակէ, որ ըստ ինքեան բաւական է զմեզ շուարեցնելու։ Այս կէտն է մեր ամենասիրելի Պատրիարքին իսպառ բառը՝ դոր յաւելած է իւր հրաժարման վրայ։

Յաւալին այն է՝ որ ազգային շահերը հոգալու խնամելու սա անգին վայրկեաններուն մէջ, հակառակ ամեն կոչմէ՝ ի զոր դրուած անկեղծ ջանից և քրանթոր վաստակոց, կարելի չեղաւ դեռ ևս այնպիսի անօրէնութեան մը յանդիլ, որով գոհ լինէին թէ Ս. Պատրիարքը, թէ Ազգ. ժողովը, թէ համօրէն ազգն և թէ՝ ի մի բան՝ ազգին շահերը։

Եւ այսպիսի անօրէնութեան մը յառաջանումն այնչափ սրտատանջ եղաւ ամենուս համար որ իւրաքանչիւր ոք խնդրոյն առ կախ վիճակին պատճառն ուրիշի մ՝արարքին մէջ փընտռելու մղուեցաւ անդդայաբար, և բացորոշ բան մը չը գտնելով, վասն զի չը կար, կասկածանաց մէջ իյնալու հարկադրեցաւ։

Թոյլ տուէք ինձ, Տեարք, որ աւելի բացայայտ կերպիւ նկարագրեմ ձեզ այս վիճակն, որպէս զի քաջ հասկցուի անոր այսօրուան ծանրակշռութիւնը։

Նախ այս ժողովէն սկսինք։

Ազգային ժողովը նկատելով որ Ամեն. Ներսէս Ս. Պատրիարքն ինչ պատճառ ալ ունենար հրաժարելու, Ն. Սրբազնութեան պատճառներն որչափ ալ մեծ բլլային, ազգային շահուց պահանջումը կար անդին, որ նոյն իսկ Ներսէս Պատրիարքէն ալ մեծ էր, և որ Ներսիսի անունը Պատրիարքական աթոռէն անբաժան պահել կը հրամայէր. բայց ըստ որում Ն. Սրբազնութիւնը ցմիրջին ատիճան կը պնդէր իւր հրաժարման վրայ և իւր անձն անբաւական կը հռչակէր Պատրիարքութեան պաշտօնը վարելու և հետևաբար Ն. Սրբազնութեան անձը պահ մը հանգիստ թողուլ հարկ կը բլլար, Ազգային ժողովս որոշեց Պատրիարքական փոխանորդ մը կարգել, և բացառիկ եղանակաւ արտօնել գնա Պատրիարքարանի ընթացիկ գործերը անօրինելու, առ ժամանակեայ կերպիւ։

Ժողովին ըրածն այս էր, բայց տակաւ առ տակաւ ուրիշ մեկնութիւն առաւ։ Որպէս թէ ոմանք մանաւոր նպատակ ունենալով Ներսէս Սրբազանին Պատրիարքութենէ հրաժեշտը ձեռք բերել, առաջնորդած բլլային ժողովոյս այնպիսի որոշումներ ընելու, որ իրաց բնական ընթացքով մի և նոյն արամադրութեան մէջ կը գտնէին նոյն իսկ զԱզգային ժողովը։ Եւ ինչո՞ւ, գիտե՞ք, այս ձրի զրպարտութիւնը, վասն զի ազգին շահերը, ժողովոյս արամադրութիւնը և Ներսէս Սրբազանին հաճութիւնը հաշտեցնելու փափաք և ջանք ունեցեր էին նոքա և Պատրիարքական փոխանորդի ընտրութիւնն անյապաղ կատարել ուզեր էին։

Կը տեսնէ՞ք թէ այսչափ պարզ եղելութիւն մ՝ինչ դժպատեհ մեկնութիւն առած է, որ լոկ կասկածանաց արգասիք է։

Գառնանք Ս. Պատրիարքին։

Պատրիարքական փոխանորդին ընտրութիւնը ժողովէս կատարուելէ յետոյ, խնդրուեր է Նորին Սրբազնութենէն որ ընտրեր փոխանորդ Գեր. Մատթէոս եպիսկոպոսն հրաւիրէ ի գլուխ իւր պաշտօնին։ Նորին Սրբազնութիւնը մտածելով թէ մի՛ զուցէ իւր հրաւէր կարգալը տեղի տայ տարապարտուց ենթադրելու որ իւր հրաժարման վրայ այնչափ պնդելէ ետև. Պատրիարքութեան պաշտօնն յանձին իւրում պահելու տրամադրութիւն ունեցած լինի ինքն. ի սկզբան կը դժուարի հրաւէր գրելու, և յետոյ գրած հրաւիրագրին ներքև ի սպառ հրաժարեալ ի Պատրիարքութենէ կը ստորագրէ, և զՄատթէոս եպիսկոպոս Պատրիարքական ամենայն փոխանորդ կանուանէ, որպէս զի ոչ ոք իրաւունք ունենայ ըսելու թէ քանի որ Նորին Սրբազնութիւնը կրնդունի Ազգային ժողովոյ ընտրած փոխանորդն ու կը հրաւիրէ զայն ի պաշտօն, ըսել կըլլայ թէ ինք Պատրիարք մնալու կը փափաքի, և թէ իւր հրաժարումն անկեղծ չէ։ Բայց այս իսպառ բառին յաւելուածն իւր նպատակէն կարի օտար մեկնութեանն ենթարկուեցաւ։ Այնպէս մեկնողներ եղան թէ Ն. Սրբազնութիւնը Գեր. Մատթէոս եպիսկոպոսն փոխանորդ ընտրուիլն իրեն անհաճոյ լինելուն համար՝ իսպառ բառը յաւելած բլլար իւր ստորագրութեան վրայ։ Որչափ հեռի Ն. Սրբազնութեան բարեսրտութենէն այս կարգի նսեմ խորհուրդներ, որչափ անհաշտ Նորին Սրբազնութեան առ Գեր. Մատթէոս եպիսկոպոսն ունեցած համակրութեան հետ այսօրինակ ցնորք զգայութիւններ։

Դանք Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոսին։

Մինչդեռ Մատթէոս եպիսկոպոս երկրին տագնապն, Ազգ. շահուց փափկութիւնն և իրեն յանձնուած պաշտօնին ծանրութիւնը նկատողութեան առնելով, անձին տկարութիւնը բաւական մեծ արգելք մը կը տեսնէր իւր վրայ դրուած ակնկալութիւնները պահելու, և այս պատճառաւ հրաժարիլ կուզէր, Ս. Պատրիարք Հօր հրաւիրագիրը կընդունի և անոր ստորագրութեան վրայ իսպառ բառը տեսածին պէս կը խորհի որ այդ բառն իր ընտրութեան առթիւ առաջին անգամ գործածուած ըլլալով, ինքն անոր բնական շարժառիթն եղած կը լինէր, և թէ Պատրիարքական աթոռոյ փոխանորդ տիտղոսն յուսակտուր կընէր զինքը Ն. Սրբազնութեան բարձր պաշտպանութենէն և զինքը միայնակ կը թողուր:

Այս կացութեան մէջ աւելի ևս կը դժուարանար իւր պաշտօնն ու անոր կիրառութիւնը. մանաւանդ որ Գեր. Մատթէոս եպիսկոպոս իւր ընտրութեանն համար ընդհանուր համաձայնութեան գոյութեան վրայ ալ կասկածելու տեղի ունէր: Ուստի կը կրկնէ իւր հրաժարականն, և նա ալ մեզի պէս խնդրոյ դուռ չը բանալու նպատակաւ՝ անձին տկարութենէն ուրիշ պատճառ ցոյց չը տար:

Եւ արդարև Գեր.Մատթէոս եպիսկոպոսին տեղ ուրիշ որ և է խելացի ազգասէր՝ մի և նոյն կերպով պիտի խորհէր, և նոյնը բանը պիտի ընէր:

Բայց այս ալ սխալ մեկնութիւն առաւ:

Ասին թէ՝ Գեր. Մատթէոս եպիսկոպոսն իւր անձնասիրութիւնն ազգին շահերէն վեր կը դասէ, և Ս. Պատրիարքէն անմիջապէս հրաւիրագիր չընդունելուն համար կը հրաժարի. և կամ թէ՝ իւր անձն ազգէն կը խնայէ, և թեթև տկարութիւն մը դարմանելը կը նախընտրէ ազգին ծառայելէ:

Գեր. Մատթէոս եպիսկոպոսը ճանչցողները դիւրաւ կը հասկնան թէ որչափ անտեղի է այս մեկնութիւնը: Նորին Գերապատուութեան ոչ ազգասիրութիւնը կրնայ կասկածանաց ներքև ձգուիլ և ոչ գործունէութիւնը: Նոյն իսկ անունք որ Նորին Գերապատուութեան ամէն գործերուն համակարծիք չեն գտնուած տեղի չունին ըսելու թէ՝ նորա տեսակէտը միշտ ազգին շահերն եղած չըլլան և թէ նորա ջանքերն առ այն ուղղեալ չըլլան:

Կը տեսնէք, Տեարք, թէ իրողութիւն ո՞ւր կը մնան, և կասկածն ըզմեզ ո՞ւր կը տանի: Հապա եթէ քիչ մ'ալ կենամք այս վիճակին մէջ, և թողուցք որ կասկածանք կասկածանաց վրայ բարդուելով, հոսանք մը կազմեն և զմեզ քշեն տանին անտուգութեան ըմբին մէջ թափեն, ի՞նչ աղետաբեր հետևանք կը ծագի անկից: Ես չեմ ուզեր այս հետևանքին քօղը վեր առնուլ. ես չարագուշակ լինելէ կը քաշուիմ, և միայն կաղաչեմ զձեզ որ մեր շուրջը դարձածներուն վրայ թափանցող ակնարկ մը ձգէք. այն բաւական կըլլայ ձեզ հասկնալու թէ ի՞նչ ծանր պատասխանատուութիւն կայ ազգին երեսփոխանաց վրայ, մեր վրայ:

(Կը շարունակի)

ԹԻՒՐՔԻԱ

—

Բէլգիական «Indépendance Belge» լրագրի 101 համարում տպված է մի երկար նամակ Կ. Պօլսից Հայ-կաթոլիկների երկպառակութեան մասին: Նամակը վերջանում է հետևեալ խորհրդաւոր դատողութեամբ:

Հասունեանները առաջ տանելով իրանց գործը գլխաւորապէս Ֆրանսիական և աւստրիական դեսպանների օգնութեամբ, վստահացան ևս մի վճռական քայլի, որը պիտի ունենայ նոյնքան վատ հետևանք աւստրիական և Ֆրանսիական շահերի համար ա-րևելքում, որչափ նոյն իսկ հայերի և տաճիկների համար: Եւ ահա ինչպէս. Ճանաչելով Հասունին պատրիարք բոլոր հայ-կաթոլիկների Բ. Դուռը ընդունեց ևս նորա նից այն յօժարակամ իրաւուրացութիւնը, որ նա արեց կառավարչութեան համար, այն է, հրաժարվեց իր բոլոր քաղաքական իրաւունքներից հայ-կաթոլիկների վրա, բաշխելով ամբողջապէս այդ իրաւունքները սուլթանի կառավարչութեան: Բայց ուշքի առնելով այն, որ Թիւրքիայի օրէնքները արգելում են մահմեդական տերութեան խառնվիլ քրիստոնեայ համայնքների աշխարհական գործերին, ևս միւս կողմից այն որ այդ համայնքները չունեն որ և իցէ ազգային հաստատութիւն իրանց ընտանեկան գործերը կարգադրելու համար, ինչպէս լուսաւորչական հայերի ազգային ժողովը, հասունեան հայերը պիտի ստիպված լինեն կամայ և ակամայ ենթարկել իրանց ներքին գործերը պապի իրաւասութեան և նորա ուղղակի միջամտութեան: Իսկ այդ հանգամանքից անշուշտ առաջ կը գայ Հռոմի տիրապետութեան զօրեղանալը ոչ միայն մի հարիւր հազարի չափ հայ-կաթոլիկների վրայ այլ ևս արևելքի մեծամեծ միւս կաթոլիկների մէջ. տեսնելով այս Ռուսաստանն էլ իր կողմից ամրիթ կունենայ շահվել Էջմիածնի Կաթուղիկոսի ազդեցութեամբ, տարածելով իր բարոյական տիրապետութիւնը Թիւրքիայի երեք միլիոն լուսաւորչական հայերի վրա: Մի՞թէ այս ամենը, հարցնում է Թղթակիցը, չի վնասի աւստրօ-ունգարական և Ֆրանսիական շահերին արևելքում:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 27 մարտի

Պահ մը երկիւղ ունեցանք թէ անիշխանութեան դուռն եմք հասած. Պատրիարքն հրաժարեալ, փոխանորդն հրաժարեալ, քաղաքական և կրօնական ժողովներն առանց գլուխի մնացած կը յայտարարեն թէ ոչինչ կարող են անել, և Ազգային ժողովը կ'որոշէր ամիս մը հանգիստ առնուլ: Այս անկանոն վիճակի առաջ ժողովուրդը կը յուզուէր մանաւանդ որ Հայաստանի բարեկարգութեանց խնդիրն ալ կերպարանք մը ունենալ սկսած էր: Ազգ. ժողովն գումարելու անհրաժեշտ հարկ կար, ուստի փոխանակ ապրիլի 6-ի երեսփոխանք ի ժողով հրաւիրուեցան մարտի 23-ի: Խուռն բազմութիւն կար: Ակատողութեան առնուեցան Պատրիարքի և իւր փոխանորդի հրաժարականներն, կարծուեցաւ թէ խնդիրն ճապաղ դիրք մը պիտի առնու և անկարգութիւններ տեղի պիտի ունենան, սակայն Աստենապետ Ստեփան փաշա շատ ճարտար կերպով կատարեց իւր պաշտօնը: Վիճաբանութիւններն երկարելու հարկ չը մնաց: Պ. Յարութիւն Մերեէմ-գուլի կարդաց մի գրաւոր առեանախօսութիւն որ մեծ տպաւորութիւն արաւ ժողովոյ վրա. յիշեալ պարոնի ազդեցութիւնը ժողովոյ մէջ արդէն մեծ է. նա խոհուն և սուր միտք ունի և թէպէտ երիտասարդ, բայց շատ անվրդով և պաղարեամբ կը շարժիւ կը խօսի. աւելի թիւրքի աշակերտ կը սեպուի քան թէ Պէոռիէի հետևող իւր ատենաբանութեանց մէջ: Պ. Մերեէմ-գուլի արդէն հակառակ էր փոխանորդին ժողովոյ կողմէն ընտրուելու և Մատթէոս եպիսկոպոսի ջերմ բարեկամներէն էր սեպուէր, բայց այս պարագայիս մէջ կը զոհէր իւր անձնական կարծիքներն և հասարակաց օգուտն միայն կ'որոնէր: Այդ ատենախօսութեան օրինակն կը գտնէք ներփակեալ. սակայն պէտք էր Պօլիս լինել և այս հրաժարմանց վէճերուն մասնակցել այդ ճառին զօրութիւնն իմանալու համար. նուրբ ակնարկութիւններ, դաղանի հարուածներ և լաւ ազդարարութիւններ պակաս չեն 'ի դմա. և ինչպէս պ. Փափազեան նախորդ նստին մէջ կ'ասէր թէ Պատրիարքն եթէ հիւանդ իսկ է իւր անձն ազգին պարտական է, նոյնն պ. Մերեէմ-գուլի կակնարկէր առ Մատթէոս եպիսկոպոս: Երբ պ. Մերեէմ-գուլի իջաւ բեմէն իւր խօսքերն այնպիսի տրպաւորութիւն մը արած էին որ այլ ևս վիճաբանութեան հարկ չը տեսնուեցաւ և նորա առաջարկութիւններն ժողովոյ կողմէ ընդունուեցան: Այդ առաջարկութիւններն «Մասիսի» մէջ լինելով ամբողջապէս կրնաք հրատարակել:

Ժողովն որոշեց որ ազգային վարչութիւնը ամեն տարի իւր գործոց տեղեկագիրն և կարևոր թղթակցութիւններն հրատարակէ «Հերմակ տետր» անուամբ: Աստենապետ փաշան ասաց թէ «Սև տետր» անունն տամք: Բայց աւելի աղէկ պիտի լինէր եթէ ամենևին անուն չը դնէին: Աստեանը փակուեցաւ Նար-Պէյ Խորէն սրբազանի ազգու և գեղեցիկ ատենախօսութեամբն: Ըստ կանոնի ընդհ. ժողովոյ ներկայ տարւոյ շրջանն փակուած է, նորն կը սկսի մայիսի 1-էն: Վերջին նիստն շատ կանոնաւոր և շատ լուրջ էր:

Մատթէոս եպիսկոպոս կը լինի ոչ թէ Պատրիարքի այլ Պատրիարքութեան փոխանորդ: Վարչութեան կողմէ պատգամաւորութիւն մը ներկայանալով նմա միասին կերթան առ Պատրիարք Սրբազանն և Մատթէոս եպիսկոպոս կ'անցնի ազգային գործոց գլուխն և կը սկսի աշխատել: Ներսէս Սրբազան կը խոստանայ մինչև մայիս այլ ևս հրաժարման խօսք չանել: Ահա այսպիսով առ այժմ ազգային իշխանութիւնը կանոնաւոր վիճակի մը մէջ կը մնայ: Եւ արդէն ժամանակն իսկ հասած ալ էր. Հայաստանի բարեկարգութեանց համար Կիլիկիոյ յանձնաժողովն մեկնեցաւ, Կարինի և Վանի յանձնաժողովն ալ քիչ օրէն մեկնի թեւեւս. Աղաբէգեան Սարգիս այդ յանձնաժողովոյ անդամ ճաց զի կառավարութիւնը նորա թղթամոլութեան վրա ո և է կասկած չունի: Իսկ այժմ թուի թէ ուրիշ յանձնաժողով մը ևս պիտի կազմուի Խարբերդի, Բալուի կողմերն այցելելու. եւ այսպէսով երեք յանձնաժողովներ կունենամք Հայաստանի և Կիլիկիոյ բարեկարգութեանց համար. բայց ոչինչ կը յուսամք:

Կիւրակէ օր, մարտ 25, Պատրիարք Սրբազանը Բէրայի եկեղեցին պատարագ մատոյց: Յետ աւարտման ազգային երևելիներն մի ժողով կազմեցին, ոչ պաշտօնական: Եւ թէպէտ այդ գումարման վրա դեռ մեր թերթերն տեղեկութիւն չը հաղորդեցին, բայց մեք ստոյգ աղբիւրէ տեղեկացանք թէ նոքա մտածեր են որ պէտք է ազգին կողմէ ևս ներկայացուցիչներ դնուին 'ի Հայաստան և 'ի Կիլիկիա, որպէս զի անուղղակի կերպով հսկեն կառավարութեան յանձնաժողովոյ վրա և պաշտպանեն ժողովուրդը: Այդ ժողովի մէջ որոշուեր է որ առանց յապաղելու ապրիլի 4-ին ազգին ներկայացուցիչներն, եկեղեցական և աշխարհական, անմիջապէս ճամբայ ելլեն. անձինքներն այս օրերս կ'որոշուին. այժմ իբր ապահով Սրուանձտեանց Գարեգին վարդապետն կայ ընտրուած. այս հայրենասէր, գործունեայ, ճարպիկ և Հայաստանը լաւ ճանչցող կտրիճ վարդապետն մեծ ծառայութիւններ կը մատուցանէ. աշխարհականաց մէջէն կարծեմք թէ պ. Ա. Պօյաճեան պիտի ընտրուի, զի սա Լոզզատի վերջին դէպքերու մէջ փրձով ցոյց տուաւ իւր ազգասիրութիւնը, ուշիմութիւնը և գործունէութիւնը: Ընտրելի ուրիշներ ևս կան: Իսկ խորհրդարանական մեայուն Յանձնաժողովն իւր գլուխն ունենալով, սկսաւ իւր աշխատութիւններն շարունակել:

Ֆրանսիայի դեսպան ամսոյս 21-ին մեկնեցաւ ատի և բացակայ պիտի լինի մինչև յունիսի սկիզբներն: Ներսէս Սրբազան նմա այցելութիւն տուաւ մեկնելէ առաջ, և դեսպանն գրաւոր խնդրեց Նորին Սրբազանութենէ որ իւր հրաժարականը ետ առնու, խոստանալով որ շարունակ հայոց դատին պաշտպան պիտի հանդիսանայ: Իսկ պ. Ձերազ մի նամակ տուաւ դեսպանին ուղղեալ առ պ. Վատինկթօն: Յիշեալ նամակի մէջ պ. Ձերազ կ'ասէ թէ ինքն ինն ամիսներ յառաջ բարեբախտութիւն ունեցաւ նոյն իսկ պ. Վատինկթօնէն լսել թէ որչափ համակիր է հայոց նաև թէ Հայաստանի բարեկարգութեան համար իւր բարձր ազդեցութիւնը պիտի գործածէ:

Բերլինի դաշնագիրն կը տրամադրէր առանց յապաղումի Հայաստանի վերանորոգմանց ձեռնարկել և ահա ինն ամիսներ անցան այդ յօդուածն մեռեալ տառ մնացած է, ուստի կը խնդրէ որ հաճի, ինչպէս յունաց դատին հոգն իւր վրա առած է գէթ մաս մ'ալ Հայոց համար մտածէ:

Պ. Ֆուռնիէ գոհունակութիւն յայտներ է և խոստացեր նամակն յանձնել. պ. Ձերազ իւր յարաբերութիւններն կը շարունակէ Եւրոպիոյ պետական անձանց հետ, կը թղթակցի և շարունակ նոցա ուշադրութիւնը Հայաստանի վրա կը հրաւիրէ:

Դիւանագիտական ամեն միջոցներն 'ի գործ կը դրուին Հայաստանի համար, իրական արդիւնք մը ունենալու համար տեսնեմք:—Պագայն յայտնի կը թուի:

Ժամանակը կը ստիպէ զիս նամակս չերկարել. սակայն այսուհետև շաբաթն երկու անգամ թղթատար պիտի ունենամք Օդէսայի ճանապարհով, հետևաբար յուսամ թէ մարտի 29-ին կարենամ շարունակութիւնը անել:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Տրնովօից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ ռուսաց կառավարութիւնը վճռել է հրաւիրել բոլգարացի պատգամաւորներին ապրիլի 15-ին Բոլգարիայի իշխան ընտրելու համար:

—«Standart» լրագրի սեփական թղթակիցը հաղորդում է ապրիլի 8-ից, որ անգլիացիներ մի գօրաբաժին դարձեալ ջարդվել է զուլուսներից: Անգլիացիներից սպանվել են 60 մարդ, իսկ 40 գերի են վերցրած:

—Տրնովօից «Polit. Corresp». լրագրին հաղորդում են, որ ռուսաց զօրքերը կը սկսեն հեռանալ Բոլգարիայից մայիսի 3-ին: Ռուսաց կառավարութիւնը աշխատում է, որ թիւրքաց զօրքերը չը գրաւեն Բալկանեան սարերը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլի: «Agence Russe» լրագիրը հաղորդում է, որ այն լուրը իբր թէ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի արևելեան Ռումելիայի ապագայ վարչութիւն կազմակերպելու համար ժողով կազմել, անհիմն է: «Новое Время» լրագիրը լսել է, որ ապրիլի 2-ի եղեռնագործ յանցաւորի մասին կայացած բարձրագոյն ատեանը կազմված է վեց անձինքներից Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչի նախագահութեան ներքոյ: Լուր կայ թէ պետական ծախսերը պակասեցնող մասնաժողովը կարելի համարեց կօնտրօլնի պալատների թիւը բաւականաչափ փոքրացնել:

ՄՕՍԿՎԱ, 11 ապրիլի: Մոսկվա գետում ջրերը նուազեցան: Վնասները ահագին են:

Կ. ՊՕԼԻՍ, 10/22 ապրիլի: Շաբաթ օրը ապրիլի 7-ին Հայոց սուրբ Երրորդութեան եկեղեցում հանդիսաւոր մաղթանք կատարվեցաւ ռուսաց Կայսեր վտանգից ազատվելու մասին. հանդիսին ներկայ էին իրանց համազգեստներով Լօրանսօվ—Լոստօվսկին և ռուսաց դեսպանատան բոլոր անդամները: Եկեղեցին շրջապատված էր 4,000 հայերով, որոնք բարձրաձայն ու ցնծագին աղաղակներով ընդունեցին ռուսաց դեսպանին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Բարձրագոյն ատեանում արդարութեան մինիստրը ապրիլի 2-ի յանցաւորի դէմ մեղադրող պաշտօն կը վարէ: «Новое Время» հաղորդում է, որ Կայսերական ընտանիքը ապրիլի 12-ին կուղևորվի դէպի Խրիմ:

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, *բացի տօն և տօնների հետևեալ օրերից։*

Լրագրի գիները և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 *ռուբլ է, կէս տարվան* 6 *ռուբլ։* Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԽԱԳՐԱՏՆ *մէջ։*

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ *ծախվում են* 5 *կոպէկով հատը։*

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА

ОБЪЯВЛЕНІЕ

Съ 9 Апрѣля будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поѣздъ № 5					Поѣздъ № 6				
Станціи.	Приходъ		Отходъ		Станціи	Приходъ		Отходъ	
	Ч.	М.	Ч.	М.		Ч.	М.	Ч.	М.
			ве	чера				попол	удни
Поти	—	—	6	45	Тифлисъ	—	—	12	56
Ріонъ	1	25	2	20	Гори	4	15	4	35
Квирили	3	46	4	59	Михайлово	6	25	6	45
Михаилово	9	36	10	06				по по	лупоч
			попо	лудні	Квирили	11	44	12	15
Гори	11.	55	12	20	Ріонъ	1	24	1	54
Тифлисъ	3	51	—	—	Поти	6	35	—	—

Пасажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

Կենդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան անդամները հրաւիրվում են ապրիլի 20-ին, երեկոյեան 7 ժամին շնորհ բերել ընկերութեան ընդհանուր ժողովին, որ լինելու է ընկերութեան բնակարանի մէջ, այն է ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ընկերութեան շինութեան մէջ, Բարիաթինսկի փողոցի վրա, Ալէքսանդրեան այգիի մօտ։ Կարող են ներկայ գտնվել և կենդանիների հովանաւորութեան գործով բոլոր հետաքրքրվողները։ Անդամներից խնդրվում է բացի սորանից, վճարել ընկերութեան գանձապահին, պ. Դ. Մ. Կասումովին իրանց անդամական վճարը։ Պ. Կասումով կենում է Վօրոնցովսկայա Նաբէրէժնայա փողոցի վրա, Վարլամովի տանը № 18 և ընդունում է փողերը առաւօտեան 8—9 ժամ և երեկոյեան 3—5 ժամ։

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕРМАНЪ на Гановской улицѣ въ домѣ Іоанисіани Имѣю честъ извѣстить почтеннейшему публику, что принимаю заказы своими товарами ноонныя и статскія платя и исполняю собственнымъ присмортомъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣется мужскія и дѣтскія костюмы заказы и продажа производится по весьма умѣреннымъ цѣнамъ.

1—10

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է, որ ապրիլի 13-ին իր ներկայութեամբ կը լինի աճուրդ հինգ տարի ժամանակով կապալով տալու համար մի կտոր գետին, որ 6000 քառակուսի սաժէն տարածութիւն ունի և որ գտնվում է Թիֆլիսի երրորդ բաժնում, 10-որդ մասում, Լրիստովի տան հանդէպ Կուր գետի մօտ։ Գետնի սահմաններն են հիւսիսից Վ. Օրբելցովի կամուրջը, արևելքից և հարաւից Կուր գետը, արևմուտքից Իսարլովի կալուածները։

Ազգ

Գառնիկ Աշէքսանոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Ալիասցի. Կ. Պոլիս Բերայի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը դրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անդղեցի վանականի մը հետ ասկէ (Պոլիսէն) եկած շրջեցառով Փոթի գրալու, անկէ ալ Թիֆլիսանցնելու նպատակաւ ճամբայ ելած օրէ մինչև յայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը և մայրը քոյրը մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

„Նուէր քեռասիր գեղջիներին“ անունով նոր գուրս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրախանութներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղջում, եթէ անմիջահէս դառան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакхъ, на Сололакской улицѣ. у Вознесенской церкви, въ д. Микаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսէթովեան։

Բժիշկ Աւետիք Բարայեան (Բարայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բարայեան (Բարայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի ազքատ հիւանդներին։ Հասցէն Աերգիևսկայա փողոց տու. Բայանդուրովի։

7—10

Ղարաբաղի և Նուխու մի քանի հայ գիւղերին առաջիկա ուսումնական տարեայ համար հարկաւոր են հայ և ռուս լեզուների և թուաբանութեան ուսուցիչներ. տրուում են բաւարար ռոճիկներ. ցանկացողները պէտք է յայտնեն նամակով իրանց ՝ուր և որքան սովորած լինելն. եթէ յայտնուեն միջնակարգ դպրոցներից աւարտածներ, նոցա կառաջարկուի ուսուցչութեան Նուխի և Լանքարան քաղաքներում. Նամակները պէտք է ուղղել հետևեալ հասցէով. Շուշի Արիստակէս Ա. Սեդրակեան։

ԱՊՐԻԼԻ 13 ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Ապրիլի 12-ին)

	Բ.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	55
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	740	—
Վիպրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	241	—
Երկրորդ 5% վիպրիչնի »	238	—
Մարսելի կուրսը 244—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ամէ 113 գլ.	100	—
Փարեժի բարաթը. . .	5	65
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	320	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաբարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքար աւազը.	5	60
» տրանզիտը. .	5	80
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Աղիւրը Շորագալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը ընաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ . .	200	—
Կախեթուն. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մոկոի. . . .	27	—
» Լանի . . .	22	—
« Մարտինոյին	18	—

ՀՈՌԱԳԻՐ

		Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկաների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 *րոպէ։*

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փաստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փաստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկովի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկրները նամակը արժէ	7
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրաչեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենեբական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչև ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վենեբական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչև ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների.

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչև ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենեբականկաշու հ., Բէլիս աչքի հիւանդութիւններին

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Յ. Ս. Փոխանակ պատասխանելու, շարունակեցէք թղթակցել և ցոյց տուէք բոլոր պակասութիւնները։ Մեզ վրա էլ շատ են հաչում, բայց ոչինչ ուշադրութիւն չենք դարձնում և շարունակում ենք աշխատել։ Նոյնը արէք և դուք։ Երբ մի թղթակցի պատուին դիպչում են, ամեն մարդ հասկանում է թէ ինչի համար է։ Ցոյս ունենք, որ աւելով հաւաքվածներից բարձր կը լինէք։

—ՆՈՒԽԻ. Ս. Կարդացինք ձեր նամակը, բայց տարաբաղդաբար չը հասկացանք։

ԹԻՖԼԻՍ. Խ. Բ. Գ. Յօդուածը գցեցինք զամբիւղը։ Խնդրում ենք միւս անգամ այդպիսի բաներ մեզ մի ուղարկէք։

Дозволено Цензурою 12 Апрѣля 1879 г Тифлисъ Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А Михельсона